ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 526-Ա

31 օգոստոսի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՄԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԱՄԻԿՈՆ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ին մասերի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 9-րդ մասի, 60-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածքային զինվորական կոմիսար Կ.Հարությունյանի տեղեկանքը, ինչպես նաև Մամիկոն Շահինյանի 2026 թվականի օգոստոսի 27-ի Մ-13665-2026 գրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մամիկոն Շահինյանին՝ 2026 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 9-ը ներառյալ, թույլատրել մասնակցելու քսանհինգօրյա վարժական հավաքներին և ժամանակավորապես ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից:

2. Մամիկոն Շահինյանի բացակայության ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Մելսիդա Սիմոնյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

3. Մամիկոն Շահինյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հոկտեմբերի 12-ից:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710040503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ